

Կ Ա Ր Ծ Ի Ք

Մաղլենա Աղասարի Առաքելյանի «Օժտվածությունը որպես հոգեկան առողջության
ռիսկի գործոն», ԺԹ. 00. 04 Կլինիկական, հատուկ հոգեբանություն»
մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության:

Պատմական ժամանակներից ի վեր մարդու հիմնախնդիրը հանդիսանում է
տարբեր բնագավառների գիտնականների ուսումնասիրության առարկան:
Հիմնախնդրի բազմակողմանի ուսումնասիրությունները առավել արտացոլված են
փիլիսոփայական, կենսաբանական, բժշկական, հոգեբանական գիտությունների
բնագավառի գիտնականների հետազոտություններում: Նշված և մեծաթիվ այլ
բնագավառների գիտնականների ուշադրության կենտրոնում առաջնային տեղ է
գրադեցնում անձի օժտվածության հիմնախնդիրը: Դա պայմանավորված է այն
հանգամանքով, որ դեռևս գոյություն ունեն բազմաթիվ իրարամերժ, փոխադարձ
միմյանց լրացնող կամ հակասող զաղափարներ: Դեռ ավելին՝ բազմաթիվ
աշխատություններում ապացուցվում է այն փաստը, որ օժտված անձինք ունեն նաև
հոգեկան առողջության խնդիրներ և պաշտպանվածության, ապահովության
զգացման առումով հանդիսանում են խոցելի խմբեր (Ա. Մյասիշչև, Դ.Ուշակով,
Ռ.Գռանովսկայա, Ա.Տանենբաում, Ռ.Ստերնբերգ, Ֆ.Ֆելդհասեն, Հ.Գարդներ և
ուրիշներ): Ժամանակակից հասարակությունների սրընթաց զարգացումների
պայմաններում հաճախ վտանգվում են մարդկանց ընդհանուր և հոգեկան
առողջության պահպանման, ինչպես նաև հոգեբանական անվտանգության
ապահովության հիմքերը: Անձի՝ հոգեհիգիենայի, նրա անհատական
առանձնահատկությունների ուսումնասիրության տեսանկյունից գոյություն ունեն
բավականին շատ գիտական աշխատանքներ: Սակայն սթրեսային իրավիճակներում
ընդհանուր օժտվածություն ունեցող պատանիների հոգեկան առողջությունը
պայմանավորող անձնային, այդ թվում նաև սոցիալ-հոգեբանական գործոնների

առանձնահատկություններն ու հոգեկան առողջության ռիսկի գործոն հանդիսացող հոգեֆիզիոլոգիական բնութագրերի փոփոխության փոխկապվածությունների ուսումնասիրությունները հոգեբանության բնագավառում բավարար չափով ուսումնասիրված չեն: Ատենախոսական աշխատանքի արդիականությունն ու գիտագործնական նշանակությունը ամրակայվում է նաև ՀՀ ԿԳՄՄՆ-յան „Հանրակրթության մասին,, օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, 2022թ.-ի փետրվարի 9-ին ընդունված որոշման պահանջներով:

Նշված հանգամանքները ակնառու ընդգծում են Մադլենա Աղասարի Առաքելյանի կողմից առաջադրված գիտական թեմայի արդիականությունն ու խիստ կարևորությունը, ինչպես նաև դրա գիտակիրառական մեծ նշանակությունը:

Ատենախոսության «Ներածություն» բաժնում համառոտ հիմնավորվում են աշխատանքի արդիականությունը, հետազոտության տեսամեթոդաբանական հայեցակարգերը, աշխատանքի նպատակը, խնդիրները, հետազոտության օբյեկտը, առարկան և այլն: Նշված ձևակերպումները աչքի են ընկնում իրենց գիտականությամբ, բովանդակային հստակությամբ: Հետազոտության մեթոդների մարտկոցն աչքի է ընկնում առաջադրված նպատակի, խնդիրների լուծման գիտագործնական պահանջների համապատասխանությամբ և կուռ ամբողջականությամբ (կիրառման նպատակահարմարություն, տեղեկատվություն, արդյունքների վիճակագրական հաշվարկի լիարժեքություն, մատչելիություն և այլն), որոնցում կիրառվել են թեստավորման և հոգեֆիզիոլոգիական երևույթների ուսումնասիրման ժամանակակից սարքավորումներ: Հետազոտության համակազմում ընդգրկվել են ավագ դպրոցի և վարժարանի 16-18 տարեկան 500 պատանիներ, որոնք հետազոտվել են երկու փուլերով: Ստուգիչ խմբում ընդգրկվել են հետազոտվողների ընդհանուր թվի 70 պատանիներ, որոնցից 35-ը օժտված և 35-ը միջին արդյունքներ գրանցած պատանիներ են: Հետազոտության արդյունքների հավաստիությունը ապահովված է հոգեբանական հիմնարար տեսությունների գիտական վերլուծություններով և անհրաժեշտ մաթեմատիկական վիճակագրական

մեթոդների կիրառման փաստով, որը հարստացվել է ռեգրեսիոն, կոռելացիոն դիսպերսիոն վերլուծությունների մեթոդներով: Խմբերում գրանցված արդյունքների արժանահավատությունը որոշվել է ըստ Ստյուդենտի t չափորոշիչի սահմանված մակարդակների ($P < 0,05^*$, $P < 0,01^{**}$, $P < 0,001^{***}$) սանդղակներով:

Պաշտպանության ներկայացվող դրույթները իրենց բովանդակությամբ արտացոլվում են աշխատանքի տեսական վերլուծություններում և հետազոտական աշխատանքի արդյունքների մեկնաբանումներում, ինչպես նաև արված եզրակացություններում:

Ստենախոսական աշխատանքի գիտական նորույթը ներկայացվում է երեք հիմնական բաղադրամասերով, որոնց հիմքում ընկած է պատանիների հոգեկան առողջության ռիսկի գործոնների համակողմանի ուսումնասիրության մոդելը:

Հետազոտության տեսական նշանակությունը կարևորվում է տարբեր դպրոցների ստորև նշված և այլ գիտնականների (Ա.Մյասիշչև, Դ.Ուշակով, Ռ.Գոանովսկայա, Ռ.Կարպինսկի, Ա.Տանենբաում, Ռ.Ստերնբերգ, Ֆ. Ֆելդհասեն, Բ.Բրատուս, Ֆ.Գալտոն, Չ.Սպիրմեն, Հ. Այգենկ, Ստերնբերգ, Ջ. Ռենգուլի, Հ.Գարդներ, Վ.Դրուժինին և այլն) օժտվածության հիմնահարցի ուսումնասիրման առաջավոր գաղափարների վերլուծության համակարգումներով, դրանց համախմբման, ինչպես նաև հետազոտական աշխատանքների իրականացման մեթոդաբանական հայեցակարգերի մշակումներով, կիրառական աշխատանքներում դրանց ներդրման նպատակահարմարության պահանջներով:

Հետազոտության կիրառական նշանակությունը կայանում է նրանում, որ ստացված արդյունքները հնարավորություն են տալիս ՀՀ համապատասխան կրթօջախներում սովորող օժտված պատանիների ու երիտասարդների հոգեբանական ուղեկցման աշխատանքներում մշակելու և ներդնելու ընդհանուր առողջության և հոգեհիգիենայի պահպանման ժամանակակից ծրագրեր և ռազմավանական հայեցակարգեր:

Հետազոտության արդյունքների փորձարկման աշխատանքները իրականացվել են ՀՀ թեքումով ուսուցանվող վարժարաններում և ճեմարաններում, ինչպես նաև ավագ դպրոցներում: Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հոդվածներում, հեղինակային գրքում: Դրանց տարբեր բաժիններ քննարկվել են Սանկտ Պետերբուրգում, Բեռլինում, Կիևում, Էդինբուրգում, Վիեննայում Ցյուրիխում, Միլանում, ԱՄՆ-ում, Թայվանում և այլուր կայացած միջազգային գիտաժողովներում:

Վերջում ներկայացվում է ատենախոսական աշխատանքի կառուցվածքը, որը բաղկացած է ներածությունից, հիմնական բովանդակությունը ներկայացնող հինգ գլուխներից, եզրակացություններից, գործնական առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից, հինգ հավելվածներից: Աշխատանքում առկա են 13 աղյուսակներ, 19 նկար, 12 հիստագրամ և 3 գծագրեր: Ատենախոսական աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 180 էջ:

Ատենախոսական աշխատանքի «Օժտվածության հիմնախնդրի պատմական զարգացումը, կոգնիտիվ հիմնադրույթները» վերտառությամբ առաջին գլուխը նվիրված է օժտվածության հիմնախնդրի գիտական պարզաբանումներին: Հեղինակը անդրադառնալով հիմնախնդրին, օժտվածություն եզրույթը լայնորեն քննարկում է սկսած բառարանային նշանակության հարցերի մեկնաբանումներից (Նեմով, Ն.Լեյտես) մինչև անձի ընտրության խնդիրները (Ջ.Վասերման, Դ.Դրուժինին, Դ.Ուշակով, Ե.Տունիկ), գիտական սահմանումները և այլն: Քննարկվում են տարբեր երկրներում, լեզուներում օժտվածության վերաբերյալ համակարգային մոտեցումները՝ անտիկ ժամանակներից մինչև մեր օերը: Հեղինակը անդրադառնալով տարբեր գիտությունների կողմից օժտվածության հիմնախնդրին (հոգեբանություն, մանկավարժություն, լեզվաբանություն ժառանգականություն և այլն) անդրադարձել է նաև անձի տեսություններում գոյություն ունեցող գիտական աշխատանքներին, որոնք նվիրված են օժտվածության և ստեղծարարության հիմնախնդրի հետազոտություններին, դրանց կլինիկական, սահմանային և նորմայի

հոգեֆիզիոլոգիական բնութագրերն արտացոլող մեկնաբանումներին, ինտելեկտի չափման, ինչպես նաև տարիքային զարգացման տարբեր փուլերում դրսևորվող ընդունակություններին, օժտվածությանը, և այլ հիմնախնդիրներին առնչվող գիտական հիմնահարցերին:

Երկրորդ՝ «Օժտվածությունը որպես համակարգ, հոգեբանական առողջության ռիսկերը գլխում» հեղինակը քննարկում է օժտվածության հիմնախնդրի համակարգային և բազմաչափ մոդելների, վարքային, հուզական, ուսուցման և շփման խնդիրների պատճառականությունների առաջադրման հիմնավորումները: Անդրադարձ է կատարվում օժտվածության վերաբերյալ Լ.Վիգոտսկու, Բ.Տեյլվի, Վ.Դրուժինինի, Ա.Ջ.Ռենզուլի, Ա.Տանենբաումի, Տ.Մատյուշկինի անձի ընդունակությունների կառուցվածքի, զարգացման օրինաչափությունների, դրսևորման առանձնահատկությունների հոգեֆիզիոլոգիական բնութագրերին և այլն: Ամփոփելով այն իր բոլոր բաղադրիչներով, օժտվածությունը դիտարկվում է որպես ինտելեկտուալ ընդունակությունների ամբողջություն:

Երրորդ գլուխը նվիրված է հոգեկան առողջության և սթրեսի զարգացման մեխանիզմների ուսումնասիրմանը: Հեղինակի կողմից անդրադարձ է կատարվում տարբեր երկրների և Համաշխարհային առողջապահական կազմակերպության կողմից ընդհանուր և հոգեկան առողջության սահմանումներին, առողջության և հիվանդության, դրանց սոցիալ-հոգեբանական, ֆիզիոլոգիական բնութագրերի նկարագրություններին: Առողջության և հիվանդությունների համատեքստում հեղինակը մանրամասն վերլուծում է Հ.Սեյլեի, Լազարուսի, Կիտան-Սմիլի, Վ.Վ.Մուվորովայի և այլոց հետազոտությունները ֆիզիոլոգիական, հոգեբանական, սոցիալական սթրեսի վերաբերյալ:

Մաղլենա Առաքելյանը մանրամասն վերլուծությունների շնորհիվ անդրադարձ է կատարում տարբեր դպրոցների հեղինակների առաջադրած գաղափարներին, տեսանելի դասձևող սխեմաների, գծանկարների միջոցով ներկայացնում սթրեսի կարգավորման, պաշտպանական, հարմարման, ախտածին գործառույթները:

Դասականների գիտական աշխատությունների վերլուծությունների հիման վրա հեղինակը համակարգելով դրանց բովանդակային ուղղվածությունները, սթրեսի կանխարգելման նպատակով առաջադրում է հոգեբանական ուղեկցման և վերականգնողական մի շարք տեխնիկաներ:

Մաղլենա Առաքելյանի ատենախոսական աշխատանքի չորրորդ գլուխը նվիրված է հետազոտությունների կազմակերպման գիտական պահանջներին, համակարգի սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններին մեկնաբանումներին, ինչպես նաև մեթոդներին ներկայացվող գիտական հիմնավորումներին և դրանց կիրառման մեթոդաբանական խնդիրներին ներկայացվող պահանջներին: Ատենախոսական աշխատանքի էքսպերիմենտալ հետազոտություններն իրականացվում են փուլային եղանակով: Առաջին փուլում կազմվել են 16-18 տարեկան օժտված պատանիների և աղջիկների նույնականացման հոգեդիագնոստիկ բնութագրերը: Երկրորդ փուլում հետազոտվել են նրանց հոգեֆիզիոլոգիական բնութագրերի առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց փոխկապակցվածության յուրահատկությունները: Հետազոտություններն իրականացվել են Շիրակացու անվան Ճեմարանում, «Քվանտ» վարժարանում, ինչպես նաև Երևանի մի շարք ավագ դպրոցներում: Հետազոտությունների արդյունքները տեսանելի դարձնելու նպատակով դրանք արտացոլվում են աղյուսակներում, գծանկարներում, նկարներում, հիստագրամներում և այլն: Սկզբնական չափումների հիման վրա հեղինակի կողմից կառուցվել է պատանիների և աղջիկների օժտվածության մոդելը, որը հնարավորություն է տվել կառուցելու հետագա հետազոտական աշխատանքների իրականացման ճանապարհային քարտեզը: Այնուհետև հետազոտվել են ուսումնական մոտիվացիայի, ինտելեկտուալ ընդունակությունների, ստեղծագործական մտածողության հոգեբանական առանձնահատկությունները, դուրս են բերվել դրանց հիմնական բնութագրիչները: Հոգեկան առողջության համատեքստում ըստ մի շարք առաջավոր գիտնականների հիմնավորման սխեմայի՝ (Բ.Բրատուս և այլն), սահմանվել են օժտվածության

ռիսկային գործոններն ու անձի հոգեկան առողջությունը բնութագրող գործառնական հնարավորությունները, տազնապայնությունը, սթրեսակայունությունը, սոցիալ-հոգեբանական հարմարումը այլն: Հետազոտվել են նաև պատանիների և աղջիկների անհատական հոգեբանական առանձնահատկությունների, էքստրավերտության, ինտրովերտության, նեյրոտիզմի, բնութագրիչները, սրտի աշխատանքի, զարկերի հաճախականության, հոգեֆիզիոլոգիական ցուցանիշները:

Ատենախոսության հինգերորդ գլուխը նվիրված է օժտված պատանիների և աղջիկների անձնային և սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների բազմակողմանի վերլուծություններին: Հետազոտություններում բացահայտվել են պատանիների և աղջիկների անձնային գծերի, հուզական անկայունության, նեյրոտիզմի, դեպրեսիվության, թափթփվածության, իմպուլսիվության, անձնային և իրավիճակային տազնապայնության, սոցիալ-հոգեբանական հարմարման առանձնահատկությունների հոգեֆիզիոլոգիական չափումների համախումբը, ինչպես նաև տղաների և աղջիկների ֆունկցիոնալ հնարավորությունների դրսևորման բնորոշ օրինաչափությունները: Շնորհիվ Մ.Առաքելյանի կողմից կիրառված մաթ. ապարատի, այդ թվում նաև կոռելյացիոն գործակցի օգտագործման, հնարավորություն է ստեղծվել ստուգիչ և հիմնական խմբերի ցուցադրած արդյունքների հիման վրա իրականացնել արժեքների համեմատական վերլուծություններ, դրանց հոգեֆիզիոլոգիական բնութագրերի գիտական հիմնավորումներ, ինչպես նաև ստացված տվյալների հիման վրա կատարել իրատեսական եզրակացություններ:

Ամփոփելով կարծիքի շարադրանքը, կարող ենք պնդել, որ ատենախոսությունը հանդիսանում է ինքնուրույն, ավարտուն աշխատանք, հեղինակը լիովին իրականացրել է թեմայում առաջադրված նպատակն ու խնդիրներին ներկայացվող բոլոր պահանջները: Սակայն աշխատանքի վերաբերյալ ունենք որոշ նկատառումներ, որոնց վրա կուզեինք բևեռել հեղինակի ուշադրությունը.

1. Ձեր կողմից առաջադրված աշխատանքի նպատակն է՝ բացահայտել ընդհանուր օժտվածություն ունեցող պատանիների հոգեկան առողջությունը պայմանավորող անձնային, սոցիալ-հոգեբանական, գործոնների առանձնահատկությունները և փոխկապակցվածությունը սթրեսային իրավիճակներով պայմանավորված հոգեֆիզիոլոգիական վիճակի փոփոխության հետ: Որքանով է ուսումնասիրված պատանիների և աղջիկների սթրեսային իրավիճակներում գտնվելու, հայտնվելու գործոնը:
2. Նախ, որքանով է բավարարում ընդհանուր օժտվածության բացահայտման համար հետազոտվողներին առաջադրված մաթեմատիկայի և ֆիզիկայի խնդիրների համախումբը և երկրորդ, ինչպես է հիմնավորվում դրանց լուծման համար հատկացված տաս տուրքի ժամանակի նպատակահարմարությունը: Կարծում եմ առաջին դեպքում պետք է խոսել ընդունակությունների ուղղվածության և ոչ ընդհանուր օժտվածության մասին, քանզի այն կարող է դրսևորվել նաև ուրիշ ասպարեզներում (հատկապես արվեստ, մարզական բնագավառ, աստղագիտության, ռազմական բնագավառ և այլն)
3. Օգտագործված գրականության աղբյուրներում գրեթե չեն արտացոլված հայրենական գիտնականների հայերեն աշխատանքները, որոնք վերաբերում են օժտվածության հիմնախնդրին:
Կարծում եմ, որ նշված դիտողությունները բոլորովին չեն ստվերում ատենախոսական աշխատանքի գիտական արժեքը, տեսական և էքսպերիմենտալ հետազոտությունների գիտագործնական կարևորությունը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

1. Մաղլենա Աղասարի Առաքելյանի «Օժտվածությունը որպես հոգեկան առողջության ռիսկի գործոն» ԺԹ.0:004. Կլինիկական, հատուկ հոգեբանություն,, մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը հանդիսանում է ինքնուրույն,

ավարտուն գիտական աշխատանք, ինչը խոսում է հեղինակի գիտական հասունության և բարձր մասնագիտական պատրաստվածության մասին: Ատենախոսական աշխատանքը իր կառուցվածքային և բովանդակային կողմերին ներկայացվող պահանջներով լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական աշխատանքներին և գիտական աստիճանաշնորհման 7-րդ կետին ներկայացվող բոլոր պահանջներին:

2. Մաղենա Աղասարի Առաքելյանը իր կողմից ներկայացված «Օժտվածությունը որպես հոգեկան առողջության ռիսկի գործոն» թեմայով ԺԹ.-00.04. թվանիշով «Կլինիկական, հատուկ հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության համար արժանի է հայցվող աստիճանին:

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Մ. Պ. Մկրտումյան
ՀՊՄՀ-ի ուսումնագիտական գծով պրոռեկտոր,

գիտական քարտուղար

Պրոֆեսոր Մ. Մկրտումյանի ստորագրությունը

հաստատում է:



(Handwritten signature)
Մ. Իսախրյան

2. 04. 2025 թ.